

«Աջակցություն քաղաքացիական հասարակությանը» ծրագիր

«Քաղաքացիական հասարակության անելիքները ներկա պայմաններում»

կազմակերպագործունեական խաղ

Հոկտեմբերի 20-24, 2021

Արթուրս Աղվերան Ռեզորթ

(հատված հաշվետվությունից)

«Պետությունը թվային աշխարհում» խմբի խաղատեխնիկի ընդլայնված հաշվետվություն

1. Եթե-ապա

Խումբը պիտի գտներ այն ակնառու և հեշտ փոփոխականը, որի հարաբերությունը պետության և թվային աշխարհի հետ դրսևորում է իրադրության գլխավոր հատկանիշները: Քանի որ թվային աշխարհը հիմնված է անխափան աշխատող կողի վրա, որի էությունն է՝ եթե-ապա, եթե Ա, ապա Բ, իսկ եթե ոչ-Ա՝ ապա ոչ-Բ, և պետությունը նույնպես հիմնված է կող(եր)ի վրա (որոնք, ավաղ, այդքան անխափան չեն աշխատում, քանի որ հանդիպում են մարդկանց ազատությանը), այդպիսի փոփոխական ընտրվեց **կողը**: Իհարկե, թվային աշխարհում էլ եթե-ապա-ները միշտ չէ, որ անխափան աշխատում են, և «բազ»-երը մեծ դեր ունեն՝ տեխնիկականից մինչև իմաստային, մեծից մինչև փոքր, մինչև ծայրահեղ «բազ»-ը՝ թվային աշխարհի անջատումը՝ էլեկտրականության խափանման պատճառով, կամ քաղաքական (կամայական) որոշման, կամ մեկ այլ կատաստրոֆի:

Այդպիսով, պետության և թվային կողերի հանդիպ (աղբ) ման տարատեսակները դարձան հիմքը խմբի զեկույցի: Պետք էր ավելացնել նաև, ամենաընդհանուր իմաստով, հասարակության կողը, քանի որ հասարակությունն ունի առանձին կող, որը բարդ հարաբերությունների մեջ է պետության կողի հետ: Պետությունը միանգամից ձևակերպվեց որպես երկակի երևույթ. ա) իր սահմանների մեջ պարփակված մի տարածք, որը կառավարվում է միասնական (մի, հատուկ տեսակի) կողերով, և բ) կառավարման համակարգ՝ ամենալայն իմաստով, որոնք այդ կողերի համապատասխան են գործում. իշխանության օրգաններից նախարարական համակարգով, ՊՈԱԿ-ներով, ՏԻՄ-երով, ընտրատեղամասերով մինչև, առնվազն, պետական դպրոցների ուսուցիչները և եթե ոչ երեխաներն ու նրանց ծնողները): Գուցե վերջիններս «միջանկյալ» խմբեր են, որոնք կառավարման համակարգի մեջ են թեկուզ իրենց կախվածությամբ, նաև ասենք՝ սոցիալական նպաստներ ստացողները, և նույնիսկ պետության հետ կապ չունեցող քաղաքացիություն ունեցողը իշխանության, ուրեմն և՛ պետության մասնակից է ընտրության

իր իրավունքով և, եթե հարկ է մուծում, դրանով: Հասարակության և քաղաքացիական հասարակության ձևակերպման տարբերությունը տրվեց մեկ այլ խմբի կողմից. հասարակությունն իշխանություն, ուրեմն և՛ պետություն ձևավորողն է, իսկ քաղաքացիական հասարակությունը՝ դրա այն մասը, որի անդամները, իշխանությանը մասնակցելով, սակայն պետություն (պետական ապարատ, կառավարման համակարգ) անձամբ ձևավորելու, նրա մեջ ընդգրկվելու հավակնություն իդեալում չպիտի դրսևորեն:

Հասարակության և պետության սահմանների հարցը նույնպես բարձրացավ: Խումբը սկզբում որոշեց սահմանափակել հասարակությունը պետության սահմաններով: Սակայն եթե պետության հատկանիշ վերցվում է իր կողմ, որոշվեց, որ հասարակությունն այն ամբողջությունն է, որի կողմ հանդիպ (աղբյուր) ում է պետության կողմին, այսինքն ցանկացած քաղաքացի՝ պետությունից դուրս էլ, և ցանկացած ոչ քաղաքացի՝ պետության ներսում էլ, որոնք (գոնե երբեմն) գործում են կամ պիտի գործեն ըստ պետության կողմերի, այդ սահմանների մեջ են, և կարող են լինել նաև այլ դեպքեր:

Խոսքը, իհարկե, պետության (և հասարակության) ոչ թե թվային կողերի մասին է, այլ՝ ա՛յլ կտրվածքի կողերի. Սահմանադրությունից սկսած այն բոլոր կանոնների և նորմերի, ներառյալ սովորույթները, ավանդական վարվելաձևերը, վարքային նախշերը, շենքային (և այլ ինֆրակառուցվածքային) կառուցվածքները, որոնք պայմանավորում են տվյալ պետության գործողությունները: Բնականաբար, հասարակական կողերն ազդում են պետության կողերի վրա բազում ձևերով. իշխանությունը ձևավորելն ընդամենը մի դեպք է, հասարակական կողերն ազդում են պետության կողերի վրա նաև պետության օղակներում գործող (և դրանից դուրս) անձանց արժեքների և սովորույթների շնորհիվ: Հակառակ ազդեցությունն էլ կա, իհարկե, սակայն հենց այդ ազդեցությունների անհամապատասխանությունն է, որ բնորոշում է իրավիճակները (եթե, ապա-ների չաշխատելը): Օրինակ, եթե պետությունը պահանջում է, որ ամրագոտի գցվի, սակայն դա տեղի չի ունենում՝ տվյալ դեպքում փաստորեն «հաղթել է» «հասարակության» կողը: Սակայն պետությունը կարող է սահմանել, թե որո՞նք են աշխատանքային օրերը - և այդ դեպքում արդեն «հաղթում է» պետության կողը:

Պետության կողերը ձգտում են ավելի շատ ֆիքսված, ձևակերպված, էքսպլիցիտ լինել օտարված կերպով՝ տեքստի կերպով (օրենքներ, պրոցեդուրաներ և այլն): Հասարակական կողերը հիմնականում ֆիքսվում և հետազոտվում են գիտնականների կողմից՝ էթնոլոգների, սոցիոլոգների, և նրանց կատարման պարտադրանքը հասարակական ճնշումն է, սովորույթը և այլն, իսկ պետական կողերինը՝ օրենքի պարտադրանքը և պատժի հավանականությունը (զուտ դեպքերում): Պետության կողերի շատ մասերի մեջ աներևույթ կերպով ավելացված են հասարակական կողեր (կամ դրանց մասեր), որոնք կապում են պետության կողերի մասերը միմյանց. դրանք անտեսանելի են թվում հաճախ և բացակա կարող են թվալ, քանի որ ֆիքսված չեն: Այսինքն սա սիմբիոզ է: Օրինակ, եթե հասարակությունից, ասենք, մարդը չի ստացել այն արժեքը, որ «եթե չգիտես՝ հարցրու նրանից, ով գիտի», քանի որ այդպիսի կողը «մոդայիկ չէ» կամ նա վստահություն չի զգում նրանց հանդեպ, ովքեր գիտեն, կամ չգիտի՝ ո՞վ

գիտի, - իր աշխատավայրում՝ որպես պետության մեխանիզմի ներկայացուցիչ, նա նույնպես չի հետաքրքրվի նրանով, ինչը չգիտի, և աշխատանքը կտուժի: Եվ դա կկոմպենսացնի հոգեբանորեն որևէ հնարով:

Կողերը՝ պետության, թե հասարակության, նաև միմյանց «մեջ» են. օրինակ, եթե պետական շենքը կառուցված է առանձին փոքրիկ սենյակների տեսքով, ավելի քիչ հավանական է, որ աշխատակիցները գործի բերումով սենյակից սենյակ գնան և թիմային կերպով աշխատեն: Եթե դահլիճն ունի նախագահողի բարձր դիրք և մնացածը պիտի նստեն, իրեն դիտելով՝ շարքերով, չի ստացվի «կլոր սեղան» քննարկում: Նույնպիսի պարտադրանքներ են բերում թվային կողերի հիման վրա գործող համացանցային համակարգերը, ասենք՝ Մալբերի համակարգը: Այդպես, կողերը դժվարություններ են ստեղծում ավելի ազատ գործելակերպ ընտրելու առջև:

Կարևոր էր նաև «եթե-ապա»-յի տարբերակումը այլ տիպի կապերից. իհարկե, կարելի է դիտարկել առանձին վերցված եթե-ապա-ներ, սակայն նրանց գլխավոր հատկանիշն այն է, որ նրանք կազմավորում են, այսպես կոչված, «բնային» (nested, гнездовье) եթե-ապա-ներ, երբ մի իրական, իրագործված, իրագործվող եթե-ապա-ն դառնում է «եթե» մեկ այլ ապայի համար, այս նոր եթե-ապա-ն՝ մեկ այլի, և այդպիսով պայմանավորվում է ինչպես թվային, այնպես էլ հիմնական աշխարհը: Եթե թվային աշխարհի դեպքում այդ բնային եթե-ապաները (կամ դրանց մի խոշոր մասը) պիտի անխափան աշխատեն, որ այն գոյություն ունենա, ապա պետության և հասարակության դեպքում վիճակը շատ ավելի բարդ է: Իդեալական թվային պետությունը կլիներ այն, որի եթե-ապաներն աշխատում են նույնքան անխափան, որքան թվային աշխարհինը, սակայն այդպիսի պետությունն ա) չկա և բ) երբևէ չի լինի, կամ անհնարին է: Սակայն այն դեպքերում, երբ կա իմաստ (պարզեցնելու, էֆեկտիվությունը բարձրացնելու, իշխանության բուրգի գագաթն իջեցնելու, մասնակցայնությունը բարձրացնելու, «մարդաստեղծ» բազ-երի որոշ մասը վերացնելու՝ առանց վնասի կամ հնարավոր բացասական արդյունքների), պետությունն ընդունում է և պիտի ընդունի իր եթե-ապա-ների և թվային աշխարհի եթե-ապա-ների կողային նույնացումը: Բայց այս դեպքում էլ անհրաժեշտ է հսկիչ-մարդ: Հսկիչ-մարդն ունի շատ ֆունկցիաներ, նաև՝ կանգնեցնել թվային պետությունը, եթե պետք է կամ՝ էմոցիաներից ելնելով, նաև՝ պահպանել, որքան հնարավոր է, պետության ոչ թվային գրադարանը (պետության կողերի հավաքածուն) այն դեպքի համար, եթե թվային աշխարհն անջատվեց վարդակից, ժամանակավորապես կամ ընդմիջտ: Ի վերջո, մարդը պիտի նաև որոշի, թե ո՞ր եթե-ապա-ները կուտակի (նրանք, որոնք իրական են) և որո՞նք մերժի (տե՛ս ստորև):

Եթե-ապա-ն, եթե իրական է, կոշտ կապ է: Խումբը մի քիչ քննարկեց, սակայն չզարգացրեց եթե-ների դասակարգումը: Խումբն առաջարկեց առնվազն երեք տեսակի եթե. ա) եթե, որի հետևում գտնվում է (որին նախորդում է) մի ամբողջ վիրտուալ (երևակայված, գուցե հնարավոր) աշխարհ. բ) եթե, որն իրականում իրագործվում է և հստակորեն ու անխափան կերպով բերում ապա-ի. գ) եթե, որը նախագիծ է. նախագծվել է սուբյեկտի կողմից, որն իր գործունեությամբ պատրաստվում է հանգեցնել այն հենց այն ապա-ին, որը նախագծված է

(գոնե դրան, բացի շատ այլ հնարավոր ապա-ներից): Սակայն այս բոլոր եթե-ներն էլ (կամ նրանց գումարները) կա՛մ հանգեցնում են հստակորեն (գոնե) մեկ ապա-ի, կա՛մ՝ ոչ: Այսպիսով, կարելի է ստուգել և տեսնել, արդյոք տվյալ եթե-ն հանգեցնում է տվյալ ապա-ին, թե ոչ, եթե ոչ՝ ինչու՛, և ի՛նչ եթե-ով պիտի փոխարինվի, որպեսզի հանգեցնի, կամ՝ ի՛նչ այլ ապա-ի է հանգեցնում: Դա պետության ֆունկցիան է (իհարկե, նաև՝ հասարակության): Այսինքն կարելի է պատկերացնել պետություն, որտեղ առանց համատարած թվայնացման եթե-ապա-ների նշանակալի մասը հստակորեն իրագործվում է, և այդպիսի պետությունը, բնականաբար, իր քաղաքացիների համար հաջողը կլինի: Իհարկե, դա նաև նշանակում է, որ իր կողերը չեն հակասում հասարակության կողերին:

Ինչ վերաբերում է նախագծային եթե-ներին, դրանք ճիշտ նախագծելը, որպեսզի հանգեցնեն հենց այն ապա-ին, որը ցանկալի էր նախագծողին, նույնպես սուբյեկտի և, ուրեմն, պետության ու հասարակության գործառնություններն են: *Գործիքները* (ստորև նկարագրված), եթե ճիշտ են կիրառվում, օգնում են, որպեսզի որքան կարելի է շատ նախագծային եթե-ներ ճիշտ ապա-ի հանգեցնեն, և այդ հանգեցումներից առաջացած հավելյալ հետևանքները նույնպես վնասակար չլինեն (որքանով որ հնարավոր է դա հայտնաբերել):

Եթե-ապա-ն կոշտ կապ է. դա նշանակում է, որ ամեն իրական եթե-ին (կամ նրանց գումարին) համապատասխանում է գոնե մեկ կարևորագույն ապա, որն էլ հենց պիտի համապատասխաներ, իսկ եթե կան այլ ապա-ներ՝ դրանք չեն խաթարում այդ եթե-ապա-ի և այլ եթե-ապա-ների կոշտ կապը: Ինչը նշանակում է, որ բնային եթե-ապա-ների էությունն այն է, որ ամեն իրագործված եթե-ապա հստակորեն հանգեցնում է մեկ այլ ապայի, որն առաջին եթե-ապա-ի հետ էլ պայմանավորում է հաջորդ ապա-ն: Այստեղ հնարավոր չեն շեղումներ, եթե այդ համակարգը նշանակալիորեն աշխատում է: Իհարկե, սրա չափազանցված տարբերակը կյանքում կարող է տհաճ, ռոբոտացված համակարգի բերել՝ իդեալական տոտալիտարիզմի: Բայց հենց այդ էլ պետության էությունն է՝ հաշվի առնել, թե ո՛ր եթե-ից ո՛ր ապա-ն պիտի հետևի, և աշխատել, հասարակության հետ, ստեղծել այնպիսի կառույց (կոդ), որպեսզի ա՛յն եթե-ապա-ները, որոնք պիտի ճշգրտորեն աշխատեն, շեղվեն որքան կարելի է քիչ: Բնական է, որոշ (շատ) դեպքերում պիտի լինի արբիտր, և դա (նաև) դատական համակարգն է՝ պաշտոնական և ոչ պաշտոնական իր տարատեսակներով (արտադատարանական մեդիացիա և այլն), ինչպես նաև, ասենք, գիտության տարբերակումը՝ ո՛րն է գիտություն, ո՛րը՝ ոչ, վերջապես՝ մարդու (մարդկանց, նաև բարդ սուբյեկտների՝ պետության և հասարակության մասերի) կողմից որոշում ընդունելը – եթե ճիշտ ստացվեց՝ ճիշտ որոշումների կուտակը հեղինակություն է ստեղծում (տեսականորեն, իդեալական դեպքում): Մեկ այլ խմբի «պրոնակտիվը» այս խմբում պիտի դառնա «հեղինակություն»՝ *կրթացնող* (տե՛ս ստորև), այսինքն իրեն ճանաչեն որպես այդպիսին:

Այս դիտարկումները նաև թույլ են տալիս այլ մոտեցում ցուցաբերել թվային աշխարհի ալգորիթմներին (ոչ թե 1-0 նշաններով, այլ եթե-ապա-ներով, որոնք շատ ավելի բարդ կառուցվածքով էություններ են): Հատկապես բնային եթե-ապա-ները հասկանալը հավելյալ հնարավորություն է թվայնացման կարիքները հասկանալու համար, ինչպես նաև՝

պետության, հասարակության և թվային եթե-ապա կողերի (կոշտ մասերի) միջև հակասությունները հեշտ է որսալ, եթե գիտես, ի՞նչ պիտի որսաս և ի՞նչ անես, որ դրանք վերանան, և պետությունը թվայնանա, որքան անհրաժեշտ է: Օրինակ, e-draft կայքում դրվում են օրենքների բոլոր նախագծերը և դրանց հասարակական քվեարկության հնարավորություն է ստեղծվում: Սակայն եթե այդ քվեարկությունը չի ազդում այդ օրենքների փոփոխության կամ ընդունման / չընդունման վրա, ուրեմն դա ձևական եթե-ապա է, այսինքն՝ «եթե իրագեկվեն, հետադարձ կապ կտան (եթե-ապա-1) (թվային ու ոչ-թվային կողերն այսքան մասում համընկնում են), որը կազդի նախագծի որակի վրա (եթե-ապա-2)» (կողի՝ ոչ-թվային մասը սկսվեց) բնային եթե-ապա-ն ճիշտ չի աշխատում: Պարտադիր չէ, որ լինի միայն քվեարկություն և որ նախագծերը անպայմանորեն ենթակա լինեն հասարակական կարծիքին և տապալվեն բացասական քվեարկության դեպքում: Պետք է համակարգը զարգացնել այնպես, որ հասարակական կարծիքի ազդեցությունը հայտնի դառնա, օրինակ, նշվի, թե ո՞ր կոմենտարներն են ազդել ինչպիսի՝ փոփոխության վրա:

Պետության ֆունկցիան է՝ ճշգրտել, համակարգել, դասդասել և օգտագործել եթե-ապա-ները (*գործիքներ* կիրառել դրանք ստեղծելու և ստուգելու համար), հատկապես տարբերակելով դրանց կոշտ դեպքերը, որոնք պայմանավորում են իրադարձությունների երկար շարքեր, ինչպես նաև՝ «նորոգելով» դեպ կոշտություն դրանց այն դեպքերը, որոնք պիտի լինեն կոշտ, սակայն չեն աշխատում: Թե ինչու՝ է հենց դա պետության ֆունկցիան՝ տես ստորև:

2. Կրթացում

Այդ ֆունկցիաները կատարելու համար պետությանը շատ բաներ են պետք: Այդ շատ բաների կուտակման համակարգը կոչվեց «կրթացում»¹: *Կրթացման* էությունը կայանում է նրանում, որ այս ամենը գիտակցող պետության հասարակությունը (իսկ իրականում սա գլոբալ հասարակության և բոլոր պետությունների խնդիրն է) գործունեության ամեն պահի ընթացքում իրենց զգայարաններին հասած ամեն երևույթ, դեպք ենթարկում են զննման, վերլուծման, քննարկման, քննադատման, հասկացման և այլ գործողությունների, որոնք կատարվում են համապատասխան *գործիքների* միջոցով (թվային և ոչ թվային), որոնք էլ հենց անընդհատ համալրվում են այդ պրոցեսի ընթացքում: Այդ բոլոր գործիքներն ինքնին կարող են լինել որակյալ կամ անորակ, այսինքն՝ կիրառվել սխալ: Ասենք, սխալ կարող է կիրառվել «վերլուծություն» չարաշահված գործիքը, եթե որևէ երևույթ վերլուծվի ո՛չ ըստ այն «ջլերի», որոնք հնարավորինս ավելի անխափան են թույլ տալիս մտտենալ, վերլուծելով, այդ երևույթի էությանը, այլ՝ պատահական «ջլերի»: Եթե մարդը բնորոշվում է որպես «երկոտանի անփետուր», դրանք ավելի պատահական «ջլեր» են, քան եթե բնորոշվում է որպես «մտածող կենդանի», որտեղ մտածել-ը ոչ այդքան պատահական «ջիլ» է: Ատումը չունի տարբեր նյութերի էական հատկանիշները, մոլեկուլը՝ ունի. ուրեմն, եթե ոչ թե աշխարհն

¹ *Կրթացումը կրթանյութ է դարձնում գործողությունների դաշտի՝ կենսագործունեության աշխարհի ամեն տարրը:*

ընդհանրապես, այլ տվյալ նյութն ենք ուզում հասկանալ՝ պետք է որպես նրա վերլուծական մաս վերցնել մոլեկուլը, ոչ թե ատոմը: Եվ այլն:

Բնական է, որ ամենաճշգրիտ վերլուծությունը պիտի ենթակա լինի ճշգրիտ, անխափան աշխատող եթե-ապա-ների: Ամեն ճշտված եթե-ապա համալրում է կրթացման անցյալը՝ գրադարանը, զինանոցը, *գործիքները*, չճշտվածները ճշտելու փորձերը՝ նույնպես: Այդ զինանոցի համալրման արդյունքում տեղի է ունենում *գարգացում*, որի մոդելն է անխափան կոշտ բնային եթե-ապա-ների շարանները, որոնք անընդհատ բարձրացնում են սուբյեկտին (պետությանը, հասարակությանը, դրանց միավորումներին) զարգացման ավելի ու ավելի նոր մակարդակների, խորացնելով նրա (նց) հիմքը: Նույնիսկ եթե լինում է կատաստրոֆ, կոշտ եթե-ապա-ների գոյությունն առայժմ վերջին հարյուրամյակներում (մարդկության մասշտաբով) թույլ չի տվել, որպեսզի այդ ընթացքը կանգ առնի, կատաստրոֆները հաղթահարվել են նախկինում կուտակված, մարդու կողմից մասամբ հասկացված կոշտ եթե-ապա-ների շնորհիվ: Սակայն առանձին պետություն-հասարակություններ կարող են չպահպանվել կատաստրոֆների արդյունքում:

Գործիքները ճիշտ են կիրառվում, եթե կոշտ եթե-ապա-ների վրա են հիմնված, կամ եթե (դրանց կիրառումից) ստացված սխալ եթե-ապա-ն սուբյեկտի կողմից գիտացված է, և այն ուղղելու ճիգեր են արվում (*գործիքներով*):

Այս մոտեցման մեջ կարևոր է *կրթացում* հասկացությունը, որը նոր դիտանկյունից է թույլ տալիս անդրադառնալ կրթության հարցերին, պատասխանելով այն հարցին, թե կրթելու շեշտը ինչի՝ վրա արժի դնել նաև (կոշտ և ոչ կոշտ եթե-ապա-ները տարբերակելու և դա անելու համար անհրաժեշտ *գործիքների*, առարկայորեն ասած՝ գիտության): Բայց նաև՝ այս մոտեցումը կրթությունն առանձին, միայն երբեմն տեղի ունեցող գործողությունից դարձնում է կենսագործունեության ամեն քայլափոխի, ամեն պահի գործողություն: Իդեալական դեպքում սուբյեկտը քայլ կատարեց, զգայարաններով ընկալեց որևէ երևույթ (իր գործողությունն՝ այդ երևույթին առնչվող), կանգ առավ և, *գործիքների* միջոցով, այդ երևույթը հետազոտեց, հասկանալով, ի՞նչն է իրեն պետք դրանում, իսկույն փոխանցեց իր այդ հասկացածը և գործողությունը, որը դրան բերեց, մեկ այլ սուբյեկտի, դրանով և՛ մյուսին դարձնելով ավելի *կրթացված*, և՛ իրեն, քանի որ այդպիսի փոխանցումը նշանակում է նաև ավելի լավ հասկանալ, ինչպե՛ս էր ինքն իր այդ գործողությունը կատարում. մյուսը, դա ընկալելով, փոխանցեց հաջորդ սուբյեկտին՝ նույն արդյունքով. առաջացավ որակապես նոր իրադրություն (բնային եթե-ապա-ները սկսեցին զարգանալ), և այդպիսով կենսագործունեության ցանկացած քայլ դառնում է *կրթացման* գործընթացի մաս: Որքան ավելի շատ է *կրթացում* տեղի ունենում, այնքան ավելի շատ նորանոր գործիքներ են սահմանվում, գիտակցվում որպես այդպիսին, և համալրում մարդկության-հասարակության-պետության զինանոցը, ինչն էլ օգնում է ավելի հաջողությամբ ստուգել եթե-ապա-ները, ավելի շատ եթե-ապա-ներ ստուգել և նորոգել կամ նաև օգտագործել չաշխատողները, եթե պետք է: Աշխարհը հարցականացնել – կրթացման պրոցեսի առաջին քայլերից է, բայց այն հաջող չի լինի, եթե գոնե որոշ եթե-ապա-ների հանդեպ վստահություն չկա:

Չնայած մարդկության զարգացումը, ըստ խմբի, հիմնված է հենց *կրթացման* պրոցեսի վրա, սակայն քչերն են դա գիտակցում և քչերն են, որոնք իրենց ամեն քայլափոխ համարում են *կրթացնելու* նյութ (դա նաև նշանակում է՝ իմաստ գտնել, թե ու՛մ և ինչու՛ էս ուզում այդ քայլափոխը սովորեցնել-փոխանցել), - սակայն հենց որ դա գիտակցվում է, դա բերում է ընկալման պարադիգմի փոփոխման, և ամեն սուբյեկտ հասկանում է, որ ինքը կա՛մ դա էր անում, կա՛մ՝ դա չանելը սխալ է, և պիտի անի:

Կարևոր է նաև հասկանալ, որ ավելորդ եթե-ապա-ները, եթե չափից շատ աշխատող (հաճախ իրարից անկապ) եթե-ապա-ներ են ներդրվել, նույնպես վտանգ են (տե՛ս նաև «սուդիտ»-ի մասին՝ ստորև): Օրինակ, մինչև e-draft-ի պես ևս տասը կայք ստեղծելը, լավ կլինի e-draft-ի ֆունկցիոնալությունը հասցնել իմաստավոր ավարտի: Երբեմն դա դժվար է, քանի որ ռեսուրս հատկացնողները հաճախ պահանջում են և՛ ս մեկ եթե-ապա, և՛ ս մեկ, առանց հաշվի առնելու, արդյոք դրանք կաշխատեն բնային մակարդակում: Օրինակ, քաղաքապետը պահանջում է կրել դիմակ համավարակից խուսափելու համար, սակայն չի մտախոհվում այն հարցով, որ քաղաքին պատկանող ավտոբուսի վարորդները չեն աշխատում ըստ ժամանակացույցի, այլ՝ ամբոխաշատ ժամերին, որպեսզի արագ իրենց պլանը կատարեն, փողը վաստակեն, իսկ այն, որ այդ ժամերին քսանհինգ տեղանոց ավտոբուսում հիսուն հոգի է՝ վեջները չէ: Սյդպիսով, մի ենթադրյալ ճիշտ եթե-ապա-ն (դիմակ կրելը) և մյուսը (նոր, հարմար, նույնիսկ համավարակային իրադրությանը հարմարեցված ավտոբուսներ բերելը), հանդիպելով մի սխալ եթե-ապա-ի (վարորդների աշխատանքի ստուգման համակարգի թերությունը) գումարած մեկ այլ սխալ եթե-ապա (փողոցների անհամապատասխանությունը ավտոմեքենաների քանակին և խցանման անխուսափելիությունը – քաղաքային պլանավորման խոշորագույն եթե-ապա²) բերում է ոչ միայն «բնային եթե-ապա-ի» ֆիասկոյի, այլև ամեն առանձին վերցրած ճիշտ եթե-ապա արժեզրկում, դարձնում սխալ, քանի որ՝ ավելորդ, չգործող:

Սյդպիսով, «բազ»-ը դառնում է «սուպերբազ», և, օրինակ, ամբողջ Հայաստանն այսօր այդ վիճակում է ծայրեիծայր: Իրական համակարգային մոտեցումը եթե-ապա-ների իրականացմանն իսպառ բացակայում է: Դա ծնում է նոր, թվում է, առաջադեմ եթե-ապա-ների ներդրման անարդյունավետություն և ֆիասկո, և արդյունքում նույնիսկ անցյալի առաջադեմ արդյունքները դադարում են այդպիսին լինել, և այդ իրադրությունը գլորում է հասարակությունն ու պետությունը ետ, անվերջ սուպերբազի աշխարհ: Օրինակ, քաղաքային այգին պիտի ունենա ծառեր: Սակայն այն պահելու համար փող է պետք:

Քաղաքապետարանը վարձակալության է տալիս դրա մի մասը, այնտեղ դրվում է կաֆե, և այն դնելու համար անպայման կտրվում են ծառեր: Բայց քանի որ մոտակայքում այլ ծառեր չեն տնկվում, մնացած ծառերը հին են՝ նույնպես հատման ենթակա, նորերը տնկվեն էլ՝ մի քանի

² Կա, իհարկե, նաև մեկ այլ սխալ եթե-ապա՝ աշխատանքային ժամերի և գրասենյակների և հիմնարկների տեղակայման կոորդինացման բացակայությունը – խնդիրներ, որոնք շատ ավելի մեծ են և իսպառ դուրս են քաղաքապետարանի իրավասությունից:

տասնյակ տարի պիտի աճեն, որ հների չափ դառնան՝ քաղաքը լերկանում է, փոշին շատանում, մարդիկ՝ ավելի հիվանդոտ դառնում, ճգնաժամը՝ խորանում:

Պետությունն ուզում է պահել հին շենքերը, սակայն քանի որ փող է պետք՝ չի պահում, բայց և չի ընտրում շրջանի վերակառուցման լավագույն, կայուն (ուրեմն և՛ դանդաղ և արագ փող չբերող) տարբերակը: Դա պարարտ հող է դառնում այլ խախտումների, արդյունքում՝ այն, որ փող աշխատելու համար խախտել, նույնիսկ գողանալ է պետք՝ է՛լ ավելի է արմատավորվում մշակույթում: Բայց նույնիսկ դա՛ ամենավատը չէ, այլ՝ այն, որ, քանի որ պետությունը սկզբում ասել էր, որ ուզում է պահել հին շենքերը, իսկ այժմ խաբում է՝ կորչում է վստահությունը – ամենի՛ ամենի հանդեպ, գեղեցիկ բառերի և ցանկությունների՝ հատկապես: Դրանով գեղեցիկ եթե-ների մի հսկայական ամպ վեր է սավառնում և ամբողջապես կտրվում իրական եթե-ապա-ներից, որոնք էլ իրենց հերթին դառնում են միայն գոյատևման և սուպերբազի եթե-ապա-ներ, արդյունքում, քանի որ գեղեցիկ եթե-ներին մարդիկ չեն ձգտում, *ապագարգացում* է սկսում տեղի ունենալ ամբողջ ֆոռնտով:

3. Վստահություն

Ուրեմն, չհաշված թվային սուպերբազերը կամ բազերը, վստահության խախտումը թույլ չի տալիս, որպեսզի ոչ-թվային եթե-ապա-ները նորմալ աշխատեն, մանավանդ՝ բնայինները:

Վստահության բացակայությունը, խարխլումը, ոչ բավարար քանակը հասարակությունում բազում պատճառներ կարող են ունենալ: Նախնական վիճակը կարող է արդեն քիչ վստահություն պարունակել, սակայն եթե դրան գումարվում է ամենօրյա փորձը և մանավանդ՝ վստահության պակասն ապագայի նկատմամբ՝ ստացվում է հետընթացի սուպերբազ:

Խումբը խորքային քննարկման ենթարկեց ոչ-թվային եթե-ապա-ների նկատմամբ վստահության վերականգնման հնարավոր պրոյեկտի խնդիրները, հատկապես՝ պետության, սակայն նաև հասարակության դիրքերից, քանի որ հասարակությունը պիտի վստահի ոչ-թվային եթե-ապա-ներին, հատկապես՝ բնային, որպեսզի պետությունն էլ իր ոչ-թվային մասով, ոչ դետերմինացված եթե-ապա-ներով (հատկապես՝ բնային) նորմալ աշխատի, էլ չասած՝ զարգանան երկուսն էլ:

Վստահությունը սահմանվում է որպես մարդու սպասում՝ որ տվյալ եթե-ից հենց տվյալ ապա-ն է ստացվելու, կամ՝ որ տվյալ եթե (ներ) - ից անսպասելի (+) անցանկալի ապա-ներ չեն բխի:

Սկզբում նույնականացվեց հինգ դեպք (և նրանց համադրություններ), որոնք թույլ են տալիս վստահությունը եթե-ապա-ների նկատմամբ վերականգնել.

ա) «Ինֆրակառուցվածքային փարոս». երբ մարդը տեսնում է, որ բարդ ինֆրակառուցվածքներն աշխատում են (օրինակ, երկնքում շատ են օդանավերը, կամ՝ բարդ երկնաքերներն են աշխատում, շուրջը կան գործարաններ, ծանր մեքենաներ և այլն), նրա

վստահությունն ավելանում է տվյալ հասարակության-պետության մեջ գործող նաև այլ (ոչ-թվային) եթե-ապա-ների նկատմամբ:

«Փոքրիկ փարոսիկներ» նույնպես կարող են լինել, օրինակ՝ Երևանի կենտրոնի սրճարանները քանի որ չեն փակվում, այլ նույնիսկ ավելանում են, նույնիսկ եթե լցված չեն՝ նշան է, որ Երևանը, գոնե, գուցե կմնա որպես աշխատող և բնակեցված համակարգ: Կամ՝ գոնե կենտրոնը:

Ուշադրություն դարձնենք, որ վստահության ամեն հաջող դեպք (երբ վստահությունը արդարացվեց, եթե-ն սպասված ապա տվեց), ինքն իրեն հավասար լինելուց բացի, ստեղծում է իր շուրջ թու յլ աուրա, այսինքն քեզ հակված է դարձնում մի քիչ ավելի վստահել ամեն ինչին: Եվ հակառակը: Այդ աուրաները՝ վստահության որակական գարգացումը կամ ապագարգացումը պոտենցիալող, կարևոր է օգտագործել:

բ) «Ծանոթ իրադրություն»։ դեպքի պարբերական կրկնությունը նույն արդյունքով (եթե-ապա) մարդու մեջ վստահություն է ավելացնում, որ նա գիտի, թե այս եթե-ապա-ն ինչպես է աշխատում: Պարտադիր չէ, որ այն աշխատի այնպես, ինչպես հարկն է: Օրինակ, եթե գիտես, որ ոստիկանությունը ա) անգամ օգնության չեկավ, բ) անգամ օգնության չեկավ, գ) անգամ օգնության չեկավ՝ դ) անգամ կաշխատես նրան չդիմել: Այստեղ մարդը սկսում է վստահել իր գիտելիքին, ինչն ամրապնդում է իր՝ ճիշտ որոշում ընդունելու ունակությունը (ճիշտ եթե-ապա-ներ արտադրելու):

Ծանոթ իրադրությունն ընդհանրապես օգնում է ճիշտ կողմնորոշվել, օրինակ՝ սեփական քաղաքում ավելի վստահ ես երթնեկում այն ճանապարհներով, որոնք լավ գիտես, եթե դրանք հաճախ չեն փոփոխվում (քանդվում, նորոգվում և այլն), իսկ օտար քաղաքում ավելի խարխափող ես: Դա նշանակում է, որ որքան ավելի հնարավոր լինի «անշարժացնել» որոշակի վայրեր, այնքան կավելանա վստահությունն այդ տեղանքի և նրանում կատարվողի նկատմամբ: Սա է, որ բացատրում է, ինչու, ասենք, հաճախակի փոփոխությունները, լինի քաղաքի լանդշաֆտում, խանութների տեսակներում, օն-լայնի ապրեքներում և այլն, խանգարում են վստահության կայունացմանը, ծնում նոստալգիա անցյալի նկատմամբ և հիշողության կարևորություն ստեղծում: Նաև բացատրում է, ինչու «վայրի շուկայական» (քիչ իրականում աշխատող եթե-ապա զսպիչներ ունեցող. տե՛ս մեկ այլ խումբ) պրակտիկաներն աշխատում են հենց այսպես վարվել. ապրեքներ անել չափից շատ հաճախ, քանդել սարքածը, նորից սարքել և այլն – որովհետև այդ դեպքում մարդը դառնում է ավելի անվստահ, կորուսյալ և, ուրեմն, ավելի հեշտ մանիպուլացվող: Օրինակ՝ փորձելով կողմնորոշվել հերթական անգամ քանդած փողոցում, նա ժամանակ չի գտնի նկատելու, որ սարքում են ոչ որակյալ նյութով, բողոքելու, դրա դեմն առնելու, - իսկ դա, իր հերթին, նաև թույլ կտա հետագայում ոչ շատ հեռու ժամանակներում նորից նորոգել, նորից փող ծախսել, նորից փող գողանալ և գոփել: «Վայրի շուկայական» մոտեցումը նաև նշանակում է անվերջ ձգտում՝ փոփոխություն անել գնալով ավելի ու ավելի վատ որակի նյութով, քանի որ այն

ավելի ու ավելի էժան է և հետո շանս է տալու նաև նորից փոփոխություն անել՝ նույն նպատակով: Անվերջ կարուսել: Մա նաև բացատրում է կոնսերվատիզմի ձգտումը:

գ) «Այլազան դեպքեր». 1. իրագործվող եթե-ապա-ների ոչ միայն քանակն է կարևոր, այլև՝ սփռվածքը. կա մի ներդաշնակ պահ, երբ իրագործվող ճիշտ եթե-ապա-ները կարող են այդքան էլ շատ չլինել, սակայն նրանց սփռվածությունն ավելացնում է վստահությունը: Օրինակ, եթե մի բժիշկ Երևանում լավ բուժեց, իսկ մեկ այլ անգամ՝ Վանաձորում մեկ այլ բժիշկ, երրորդ անգամ էլ՝ Գորիսում երրորդ բժիշկը, մարդ կսկսի ավելի շուտ վստահել, քան չվստահել այս ամբողջ երկրի բժշկական համակարգին:

2. Մրա ավելի բարդ դեպքն է սկզբունքորեն այլազան դեպքերին հանդիպելը: Օրինակ, եթե Երևանում բժիշկը լավ բուժեց, Վանաձորում՝ տրանսպորտն անխափան աշխատեց, Գորիսում՝ ԱԻՆ-ը լավ աշխատեց և փակված դռնն արագ եկավ ու բացեց՝ մարդ ընդհանուր առմամբ ավելի մեծ վստահությամբ լցված կլինի դեպ ամբողջ համակարգը:

դ) «Վիճակագրությունը որպես արժեք». եթե մարդ վիճակագրությունից բան է հասկանում, նա հաճախ սկսում է այն կիրառել իր մոտեցումներում և հաշվարկներում հերիստիկորեն, այսինքն՝ անհիմն կերպով, բայց խնդրի մասշտաբը հասկանալու համար՝ մոտավորություններ պատկերացնելով: Օրինակ՝ եթե մեկնումեկը նրան խաբեց մեկ անգամ, երկրորդ անգամ, երրորդ անգամ՝ չորրորդ անգամ նա հաշվի կառնի, որ դա առնվազն հնարավոր է, և կաշխատի գործարքի մեջ չմտնել: Նույն կերպ, եթե մի լուրը եկավ մեկ տեղից, երկրորդ տեղից, երրորդ տեղից - և լուրի այդ աղբյուրները նախկինում քիչ թե շատ վստահելի լուրեր էին հաղորդել՝ նա հավանական է, որ այս անգամ էլ լուրին վստահի: Ավելի բարդ դեպքեր են երբ, ասենք, հինգ հոգու հետ շփվելուց հետո նա իմանում է, որ նրանցից երեքն ազատորեն խոսում են ռուսերեն, և եզրակացնում, որ եթե ոչ ամբողջ բնակչության վաթսուն տոկոսը, ապա կեսից շատն ազատորեն խոսում են ռուսերեն: Այս «ներքին գուշակումները» (conjecture) կարող են արագորեն փոխվել, եթե այդ «ներքին» (անհիմն) հաշվարկը չարդարացավ, սակայն որպես «բութ մատի օրենք» օգնում են մարդուն կողմնորոշվել, քանի դեռ չեն խախտվել:

Այս դեպքերը հակադրված են վստահության պակասի մի կարևորագույն մշակութային դեպքին, երբ աշխարհը տեսնվում է որպես «հատուկենտության աշխարհ»: Մարդիկ, որոնք աշխարհի ամեն դեպքին մոտենում են որպես միակ (չունեն ընդհանրացնելու կարողություն կամ խասայթ, սովորույթ, նորմ, արժեք), և նրանց մոտ բացակայում է «վիճակագրությունը որպես արժեք» արժեքը, չեն կարողանում հետևություն անել որևէ անցյալի դեպքից՝ հաջորդի համար, չեն կանխագուշակում հաջորդի արդյունքը, օրինակ՝ մեկն իրենց խաբում է ամեն անգամ, սակայն նրանք ամեն անգամ հույս ունեն, որ այս անգամ չի խաբի:

Այսպիսի մարդիկ, իհարկե, պատկանում են որոշակի մշակույթի (ավելի փոքր համայնքների, մեծ տեխնոլոգիական-կողային, ինֆրակառուցվածքային, եթե-ապա-ական բնային հանգույցներից հեռու, հաճախ՝ գյուղական): Մրանք այն մարդիկ են, որոնք չեն ըմբռնել մինչև

վերջ մուլտիպլիկացիայի արժեքը (մեկ այլ խմբի տերմինը), ի վերջո՝ քաղաքակրթության արժեքը (որտեղ մշակութային արժեքները, պարզունականանալով, տիրաժավորվում են նույնությամբ՝ առաջին պարզունակացումից հետո³)⁴, այսինքն՝ ինդուստրիայի արժեքը: Կարելի է ասել, այս մարդիկ արխայիկ աշխարհայացք ունեն:

ե) Եվ վերջինը՝ «աուդիտ»-ը լայն իմաստով, այսինքն՝ ստուգելն օգնում է ունենալ վստահություն կամ վերականգնել այն: Մակայն պետք է հաշվի առնել, որ ստուգելը «բռնեցնելու» համար չէ միայն, այլև՝ կատարելագործելու եթե-ապա-ները, «բազ»-երը որսալու և վերացնելու: Բացի այդ՝ այն թանկ է: Մարդը գերադասում է, որ որքան կարելի է շատ բաներ անփոփոխ լինեն կամ դանդաղ փոփոխվեն՝ փոփոխությանը սովորելու իր կարողությանը համընթաց, փոփոխության՝ իր սպասած ուղղությանը (իր եթե-ին) համապատասխան ուղղությամբ: Որովհետև ստուգելը շատ թանկ գործողություն է և այն երբևէ չի կարող ստուգման կարիք ունեցող ամեն եթե-ապա-ի ետևից հասնել: Ուրեմն, պետք է եթե-ապա-ների մշակույթը տեղում լինի, որպեսզի քիչ լինի «աուդիտ»-ի կարիքը (այնքան, որքան պետք է), բայց նաև՝ պիտի, ուրեմն, այլ միջոցներով վստահությունը կառուցվի: «Աուդիտի» չափազանցումը հանգեցնում է ֆունկցիոնալության կորստի մեկ այլ կողմից՝ երբ առաջնային, թիրախային եթե-ապա-ն փոխարինվում է «եթե - չափազանցված պրոցեդուրա (չափազանցված կողմորում) – ապա-ն կորավ» շղթայով (չափազանցված, «քաղցկեղային» բյուրոկրատիզմ), որը նույնպես (հատկապես՝ ցածր վստահության) պետության հայտնի ախտերից է: Ոմանց թվում է, թե պետության կողերի բարելավման ուղին հենց դա է՝ ամենը ստուգելը, և այդ մոտեցումն անիմաստացնում է եթե-ապա-ները և սուպերբազն ավելացնում այդպիսի, բարի մտադրությամբ հղացված, ծախսատար ռեֆորմների միջոցով:

Խումբը քննարկեց մի շարք այդպիսի իրադրություններ, որոնց էությունը բնորոշվել է բարձրաստիճան մի պաշտոնյայի կողմից այսպես. «Համակարգը խիստ զբաղված է, բայց չի աշխատում»: Իրադրությունների մյուս քննարկված տեսակը՝ պետության ներքին կողերին հատուկ, ձևակերպվել է մեկ այլ բարձրաստիճան պաշտոնյայի կողմից այսպես. «Պետք է հավատալով անել այն փոփոխությունը, որի արդյունքի վրա գուցե հավատացած չես» (այսինքն բնային եթե-ապա չի ստացվելու երևի): Մա շատ վտանգավոր դեպք է, քանի որ ցույց է տալիս սուպերբազի՝ պետության գործառույթներն իրականացնող անհատներին պարտադրելը՝ ինքն իրեն ամրապնդել, մեծացնել, սնուցել:

Այս դեպքերի հակաթույնը, սակայն, մանրամասն չքննարկվեց, ժամանակի սղության պատճառով. փոխարենը խումբը կենտրոնացավ վստահության պակասի՝ հասարակական

³ Եվ այստեղ, իհարկե, վստահության տեսակետից ամենաարժեքավորն են այն մուլտիպլիկացիաները, որոնք հնարավորինս քիչ են պարզունակացվում օրիգինալի հանդեպ մինչև տիրաժավորման սկսվելը – ինչպես, օրինակ, կոկա-կոլան, որը նույնն է համով ցանկացած տեղ և ժամանակ, եթե կա, իսկ շշերը կարող են տարբեր լինել:

⁴ Վստահությունը (նաև մուլտիպլիկացիոն իմաստով)՝ անշեղորեն գործող բնային եթե-ապա-ները պիտի լինեն այն դաշտը, որի վրա հենվելով՝ նորը, ռիսկայինը, այն, ինչը դեռ պիտի վստահություն մակարեթի իր հանդեպ՝ գալիս է, որպեսզի մարդուկը կարողանա ճիշտ արագությամբ նորը մարսել, նրա եթե-ապա-ն վերլուծել, որոշել, ներմուծել դաշտի մեջ կամ ոչ:

(«մշակութային») դրսևորումների վրա, քանի որ հասարակական կոդերը ծով են, որոնց մեջ ընկղմված են պետության՝ ավելի հստակ ձևակերպված կոդերը, այսինքն՝ հասարակականներն առաջնային են, կոնստեքստային: Եթե դրանք բարելավվեցին՝ պետության կոդերն իսկույն ռեակցիա կտան և կդառնան նույնպես ավելի էֆեկտիվ: Եթե, ասենք, «աուդիտ»-ը կազմակերպվում է իրոք գործի արդյունավետությունը բարձրացնելու համար, այլ ոչ թե «քաղաքական նպատակներով»՝ ապա աուդիտորը կիմանա, ի՞նչը ստուգել և որքա՛ն, որպեսզի եթե-ապա-ներ արտադրելու գործը չխաթարվի և բարելավվի: Հակառակ դեպքում նպատակը ոչ թե ստուգել և բարելավելն է, այլ գործը խաթարելը, այսինքն՝ «աուդիտ»-ի պրոցեդուրան այլասերված է, և գործում է «եթե տվյալ օղակը նորմալ կամ լավ աշխատում է՝ պիտի խանգարվի» եթե-ապա-ն, ինչը ծնելու է բազում ֆիկտիվ հետևանքային եթե-ապա-ներ և խցանի իրական եթե-ապա-ները կեղծերից տարբերակելու՝ համակարգի կարողությունը:

Մյուս կողմից, «աուդիտ»-ը, ինչպես ասացինք, միայն եղածի համապատասխանությունը (կողի՝ «դրսի» եթե-ապա-ին, երկու կողերի) ստուգելու համար չէ, այլն՝ արժևորելու, գնահատելու: Հենց դա է, որ հավելյալ միջոց է «վստահության փարոսներ» ստեղծելու: Ամեն ճշգրիտ եթե-ապա, մանավանդ՝ գոնե փոքր-ինչ բնային, մի՛ քիչ ազդում է իր շրջապատի վրա, և եթե այդ պահին արժևորող պատահի և դա բարձրաձայնի՝ գուցե այդ ազդեցությունն ուժեղանա, որպես *պրոտոտիպ* (տե՛ս ստորև) կամ էտալոն ընկալվի այս դեպքը: Մա, իհարկե, ավելի շատ կոմունիկացիոն խնդիրներին է վերաբերում, որոնք խումբը գրեթե չի դիտարկել: Նշվել է միայն, որ եթե նախնական եթե-ն կոմունիկացիոն ապա-ից անջատ է՝ վստահություն չկա, եթե կոմունիկացնող սուբյեկտը վստահելի չէ՝ ինչ էլ ասի, թեկուզ ճշմարտություն, բնականաբար, վստահություն չկա, և հատկապես վստահություն չկա, եթե «վստահություն» բառն ու իրեն հարող իմաստներն են օգտագործվում համոզելու համար (ամպագոռոգոռ բառեր): Սակայն ընդհանուր առմամբ արժևորման արժեքի, որակի, վարքի ոչ բավարար ներկայությունը հենց հայաստանյան իրականության մեջ նշվեց (տե՛ս 3 և 7 դեպքերը ստորև):

զ) Եվս ինչ-որ բան...

է) Համակցել այս բոլորը:

ը) Սրանց ոչ բոլորի ինչ-որ համաստեղություններ:

թ) Եվ այլն:

Որպես քննարկման հաջորդ մաս, խումբը դիտարկեց վստահության պակասի պատճառները: Բացի վերը նշվածից («հատուկենտության աշխարհայացք») և վերից մակաբերելիից (ինֆրակառուցվածքների պակաս, փարոսների պակաս, հեղինակությունների պակաս, այլազան դեպքերի պակաս և այլն) ուրույն պատճառներ սահմանվեցին նաև խաբելը որպես ծես, խաղ, հաճույք, ստեղծագործություն, իռացիոնալ արարք... Սրանցից յուրաքանչյուրը մտագործունեական վերլուծության է ենթակա հետագայում:

Դիտարկվեցին նաև որոշակի, կրկին մշակութային, առանձնահատկություններ, օրինակ՝ խաբողը տվյալ համայնքից է, դրա համար իր ռեֆերենտային խումբն իրեն չի պարտադրում փոխվել, համարում է «համայնքի հատուկ արժեքավոր դեպք» (համայնքի նորմը «ճղող» է պետք՝ հեղինակություն, այն էլ կարող է իր «ռենոմեն»՝ բարի անունը, բարի համբավը գոհաբերվի այդ պատճառով), կամ՝ պարզապես նորմ, երբ խաբելը վատ բան չի համարվում:

Թեև այս պատճառները հաղթահարելով, վերը բերված՝ վստահության կայացման խոշոր դեպքերը որպես արդյունք ստանալու համար պահանջվող բոլոր քայլերը չքննարկվեցին, սակայն բնորոշվեցին մի քանի քայլ-դեպք-տարբերակ, որոնք օգնում են ճիշտ ուղղությամբ շարժվել:

1. Պրոտոտիպ. վարվել ճիշտ կերպով, ճիշտ, աշխատող եթե-ապա-ներ արտադրել, ցուցադրել (ներառյալ՝ «բնային»), ծառայել օրինակ, որը կարող է հետո կրկնօրինակվել (նաև՝ հեղինակություններ, ռեֆերենցիալ կետեր բուծել այդպիսով):
2. Հատուկեցության աշխարհայացքը կրողների դեպքում՝ աշխարհն ընդլայնել, հնարավորություն տալ նրանց ճամփորդել, սահմանափակ աշխարհայացքը հաղթահարել:
3. Բնականաբար, «աուդիտ»-ը (բայց այն պիտի վստահելիների կողմից արվելիս լինի):
4. Իրերի փոխկապակցվածությունը բացատրել - եթե-ապա-ների անխուսափելիությունը (*կրթացման* միջոցով):
5. Հոգեբանական աշխատանքից վերցված մեթոդ - սուպերվիզիա (հեղինակությունների միջոցով նաև): Սա շատ կարևոր է սեփական անձի նկատմամբ վստահությունը բարձրացնելու համար - երբ ոչ թե դու՝ պիտի վստահես, այլ՝ քե՛զ, գուցեն՝ ի՛նքդ քեզ:
6. Ինպլանտացիա - երբ դրսից ամրոց է ներդրվում ցածր վստահության կոնտեքստում, որը պահպանվում է, կոնտեքստին մատակարարելով (որքան կարելի է) ճիշտ *կրթացում*, սակայն (որքան հնարավոր է) թույլ չտալով, որպեսզի կոնտեքստը խորապես ազդի իր՝ ամրոցի վրա (Ամերիկյան համալսարան, Թումոն ևն):
7. «Շղթայական ռեակցիա». եթե մի համայնքում հեղինակությունը ստիպում է, որ համայնքապետը ջրատարը նորոգի (քանի որ փողը ստացել է ու չի նորոգում), հեղինակությունը դա հաղորդում է մյուս համայնքին և այնտեղ էլ են ստիպում, և այլն: Սա պիտի զարգանա նաև ո՛չ մուլտիպլիկացիոն ձևով (մի համայնքում՝ ջրատար, մյուսում՝ շէբենը եթե լցրել են՝ ասֆալտն էլ պիտի լցնեն), բացի այդ՝ սրա համար հատուկ ռեսուրս է պետք՝ հեղինակության և այլոց կողմից ծախսվելիք, որպեսզի շղթան կայանա - այսինքն հենց այս էֆեկտի համար հավելյալ ռեսուրս է պետք (որը կարող է գալ քաղհասարակության խմբի աշխատանքի արդյունքներից): Նաև կարևոր է բնային եթե-ապայի առաջացումը, այսինքն, երբ ջրատարը նորոգվել է, համազրուղացիները պիտի նաև դադարեն միմյանցից գողանալ ջուրը, դա էլ մի հավելյալ եթե է, որը, գումարվելով նորոգ ջրատարին, կտա գյուղի արտադրանքի բարձրացում: Իսկ դրան հասնելն ավելի բարդ է, քանի որ մեկ գյուղապետին ստիպել չէ, այլ՝ մշակույթի փոփոխություն. այն, ինչ նախկինում թվում էր «անփող»՝ բնությունից եկող, «միշտ առկա»՝ այժմ չափվող ռեսուրս է: Գյուղացիները հաճախ չեն

Էլ ձևակերպում միմյանցից ջուր տանելը որպես գողություն, մանավանդ՝ ջրատարը նորոգելու համար հատկացված խողովակների՝ գյուղապետի կողմից տարիներ շարունակ գողանալու մասշտաբի համեմատ (ինչի արդյունքում ջուրը ներծծվում էր գետնի մեջ – առանց այն էլ կորչում էր անխնա կերպով, էլ ի՛նչ գողանալ): Այժմ, սակայն, երբ ջրատարը նորոգվել է, կարելի է գյուղացիներին նաև բացատրել, որ այժմվանից ջուր գողանալ չի լինելու: Բարդ է, բայց կարելի է: Եթե դա անում է իրենցից մեկը, ավելի հավանական է, որ ստացվի: Եթե ջուրն ավելորդ տեղը չի անհետանում, ապա այն այլևս իրոք շուկայական արժեք է (ապրանք - commodification): Եթե ծառն անհիմն կերպով չի կտրվում, ապա նրա գոյությունը ն՛ ծառասիրություն, ն՛ առողջություն (թթվածին), ն՛ հարգանք՝ դեպ չկտրողներն է տարածում, սովորույթ, վստահություն՝ որ ծառ կտրողներն այն անհիմն կերպով չեն կտրելու, և գուցե նույնիսկ ազդի, որ իր շուրջը չաղտոտեն: Եթե ջրամուտքի ապակիները կոտրված չեն, ապա ավելի հավանական է, որ եթե մեկը կոտրվեց՝ նոր ապակի դնեն:

8. Եվս ինչ-որ բան...
9. Համակցել այս բոլորը:
10. Սրանց ոչ բոլորի ինչ-որ համաստեղություններ:
11. Եվ այլն:

Այս աշխատանքը ցույց է տալիս, թե որքա՛ն դժվար է վստահության կայացումը, որքա՛ն քիչ միջոցներ կան դրա համար, և որքա՛ն դժվարին է լինելու հանրային ճանապարհը՝ ն՛ ներքին, և՛ արտաքին գործոններին դիմակայելու իր առաքելության մեջ՝ հաշվի առնելով, որ վստահությունն աշխարհի մասշտաբով խարխիվում է և՛ ներսից, և՛ դրսից, և՛ թվային աշխարհի, և՛ ոչ-թվային աշխարհի կողմերից և միջոցներով, և՛ կողերի ներունակ բազերի, և՛ դրանց բովանդակության կողերի բազերի, և՛ «բնածին», և՛ արհեստածին բազերի շնորհիվ: Հավանական է, որ անհատների մեծ մասը կփրկվի (գոյատևման առումով), սակայն կարևորագույն մարտահրավերն է այժմ փրկելը (եթե պետք է, եթե հնարավոր է) հանրություններին՝ պետություններին, հասարակություններին. նաև ինֆորմացիայի քանակի ավելացման արդյունքում հասկացվել է, թե որքա՛ն անկատար են դրանք, և եթե մեկը դա գիտի, իսկ մյուսը՝ ոչ՝ առաջինը հսկայական հնարավորություններ է ձեռք բերում թվային և ոչ-թվային բազեր թողարկելով՝ խարխիլել համեմատաբար մեծ բարդ սուբյեկտները՝ (կողերի՝ առանձին վերցված, համեմատաբար անկախ համակարգեր՝) պետություններն ու հասարակությունները, խորապես ազդել նրանց էֆեկտիվության և որակի վրա: Անհատական օրինակները, առանձին պրոյեկտները լավ են, սակայն եթե դրանք չեն միավորվում բնային եթե-ապա-ների մեջ, եթե տեղի չի ունենում «շղթայական ռեակցիա», քանակը որակ չի դառնում՝ դրանք չեն օգնի:

Որպեսզի *սուպերբազը* չհաղթանակի՝ պետք է անընդհատ, անխոնջ և մանրագնի աշխատանք, «ոսկերչական», որպեսզի ո՛չ թե գոնե առանձին եթե-ապա-ներ կայանան (դա չի օգնի, ընդհակառակը), այլ՝ բնային եթե-ապա-ներ. եթե չկա զարգացում (և իր միակ՝ *կրթացման* իմաստով, քանի որ մուլտիպլիկացիան զարգացում չէ), չկա նաև տեղում դոփել, այլ՝ միայն հետզարգացում, ետընթաց:

4. Հետևություններ և առաջարկներ

Խմբի աշխատանքը հանգեցնում է շարունակման (follow up) երկու կարիքի.

ա. Անհրաժեշտ է խորացնել **կրթացման մեթոդաբանությունը** և աշխատել այդ մեթոդաբանության՝ հասարակության համար հասանելիությունը մեծացնելու վրա:

բ. Անհրաժեշտ է շարունակել հետազոտել և ներդնել **վստահության** կայացման / վերականգնման **օնթոլոգիական** (ո՛չ կոմունիկացիոն, ո՛չ հոռետրական, ո՛չ փիառային) մեխանիզմները՝ «լուռ» վարքին, ո՛չ թե կոմունիկացիային վստահելու:

Հետևություններ քաղհասարակության (և ԵՀՀ-ի) համար.

1. Ստեղծիր կոշտ եթե-ապա-ներ (օրինակ՝ ամեն երկուշաբթի ժողով է), որոնց մուլտիպլիկացիոն էֆեկտի վրա ստեղծվում են նոր եթե-ապա-ները:
2. Կոշտացրու «լուռացող» եթե-ապա-ները (օրինակ՝ ամեն միջոցառումից հետո մասնակիցներին պիտի ուղարկվի գնահատման հարցաշար. ամեն հանդիպումից հետո հյուրերին՝ շնորհակալական նամակ):
3. Ստեղծիր բնային եթե-ապա-ների ալգորիթմներ (տրենինգն արվում է ոչ թե «պծիչկայի» համար, այլ՝ որպեսզի մասնակիցներին տրվի գործածվելի ալգորիթմ. դա նրանց տալուց հետո պիտի ստուգելի լինի նրանց կողմից դրա օգտագործումը ժամանակի ընթացքում):
4. *Կրթացրու* կենսագործունեությունը և շրջապատը. ամեն քայլ կատարելիս՝ դուրս որսա դրա իմաստը (եթե-ապա-ն), հաղորդելիությունը, և կիսիր մյուսի հետ այնպես, որ նա էլ կարողանա այն օգտագործել, և քո՝ այդ քայլը կատարելն էլ դառնա ավելի գիտակից, ավելի վարպետանաս, և մուլտիպլիկացնեք այդ քայլը, դարձնելով այն *գործիք*:
5. Որսա բազերը. օրինակ՝ խմբագրիր ամեն տեքստ:
6. Մի՛ տրվիր սուպերբազին: Օրինակ՝ մի ընդգրկվիր այն պրոյեկտների մեջ, որոնք բնային եթե-ապա չեն ծնելու:

Դասեր պետության համար.

1. Եթե-ապա-ն կոշտ չի լինի, եթե հասարակության արժեքային համակարգին (կողին) չի համապատասխանում:
2. Մի՛ չափազանցրու «առողիտ»-ի օգտագործումը (ալգորիթմը-ծեսը մի անիմաստացրու):
3. «Առողիտ» անողներին բացատրիր արածիդ բնային եթե-ապա-ի ալգորիթմը, որպեսզի հասկանան, ինչու էիր այդպես անում: *Կրթացրու*:
4. Օգտագործիր քաղհասարակության ճկունությունը, հենվիր նրա վրա:

5. Բնային եթե-ապա-ների ալգորիթմը քննարկիր ոչ ֆորմալ և ոչ հանրային իրավիճակներում՝ քաղհասարակության հետ (օնթոլոգիական, ոչ թե կոմունիկացիոն վստահություն կառուցիր):
6. «Ճղիր» կոմպարտմենտալիզացիան (խցիկայնացումը), որպեսզի եթե-ապա-ները դառնան բնային:
7. Որսա բազերը և մի տրվիր սուպերբազին:

5. Հավելված. եթե-ապա հարաբերության հավելյալ պարզաբանում

Եթե-ապա հարաբերությունը պայմանի հարաբերություն է: Իսկ ինչպես են հարաբերվում պայմանն ու պատճառա-հետևանքային կապը: Միսլ է կարծել, որ յուրաքանչյուր եթե-ապա նաև պատճառա-հետևանքային կապ է: Բնավ: Պատճառա-հետևանքային կապ կարող է լինել միայն իրական եթե-ապա-ների մի մասի դեպքում:

Պատճառա-հետևանքային կապն ավելի օնթոլոգիական, խորքային երևույթ է: Դու կարող է չիմանաս, ինչու՝ է տվյալ սարքն աշխատում, սակայն իմանաս, ինչպե՛ս է այն աշխատում, և եթե ճիշտ գործարկեցիր՝ այն կաշխատի: Կարող է չիմանաս, ինչու՝ է գալիս գարուն, սակայն գիտես, որ այն գալիս է, և ցանում ես ճիշտ ժամանակին, ցանքսը խնամում - և բերք ստանում:

Սակայն «պայման» հասկացությունը նույնպես պիտի վերլուծվի: Սովորաբար մենք, «պայմանական» ասելով, նկատի ունենք այն, ինչի վերաբերյալ պայմանավորվել են մարդիկ: Օրինակ, մարդկային օրենքները կամ նշանները հաճախ անվանվում են «պայմանական», քանի որ համարվում է, որ մարդիկ դրանց վերաբերյալ պայմանավորվել են: Բհարկե, ոչ բոլոր մարդիկ, որոնք այդ պայմանականությանը ենթակա են կամ դրանից օգտվում են, մասնակցել են այդ պայմանավորմանը փաստացիորեն, սակայն ինչ-որ մարդիկ դա արել են - և քանի դեռ այդ պայմանականությունը գործում է, քանի դեռ դրա դեմ չեն աստամբել, այլն առաջարկել և դրանով նախկին պայմանավորվածությունը փոխարինել, պայմանը պահպանվում է: Օրինակ, խնձորը կոչվում է «խնձոր», քանի դեռ դրա վերաբերյալ այլ որոշում չեն կայացրել: Այն, որ խնձորը կոչվում է հայերեն «խնձոր», չի կարելի ասել, թե գիտակից պայմանավորվածության արդյունք է: Գիտակից թե անգիտակից՝ ինչ-որ պահից, ինչ-որ իրադրությունների հանրագումարից այն սկսել է այդպես կոչվել: Քանի դեռ դա այդպես է, ժողովրդի միջև կնքված «պայմանը»՝ որ խնձորը կոչվի «խնձոր», չի խախտվում:

Մյուս կողմից, Երևանի Մարքսի փողոցը վերանվանվեց Խորենացու - և դա արվեց իշխի կողմից, Հայաստանի՝ ՄԱԿ-ի անդամ պետություն դառնալուց հետո. այդ իշխը համարում էր, որ, քանի որ ինքն ընտրված է ժողովրդի կողմից՝ ժողովուրդն իրեն իրավունք, մանդատ է տվել նաև, հետևելով որոշակի պրոցեդուրաների, կատարել այդ և այլ անվանափոխություններ (և այլ արարքներ)⁵:

⁵ Հանրային պայմանագիրը (սոցիալական կոնտրակտը) հենց այդ տրամաբանությամբ է բացատրվում:

Այսպիսով, իրական եթե-ապա-ները որոշակի հանգամանքների դեպքում գործող պայմանական կապեր են: Օրինակ, եթե փողոցում վառվում է երթևեկության ինֆրակառուցվածքի մաս կարմիր լույսը, ապա՝ կանգնիր (և շատերը կանգնում են աշխարհով մեկ): Սակայն եթե Ամստերդամի կենտրոնի թաղամասում կարմիր ցուցափեղկ է, ապա՝ երևի այնտեղ մարմնավաճառ է կանգնած: Եթե կարմիր լույսը երթևեկության ինֆրակառուցվածքի մաս է, հավանական է, որ այն փոխարինվի կանաչով: Եթե չփոխարինվեց, ապա՝ կա՛մ երթևեկության ինֆրակառուցվածքի մաս չէ, կա՛մ ինֆրակառուցվածքը թերի է, առնվազն մի մասը՝ չաշխատող: Եթե բնակարանում լույս վառվեց, և դրսից տեսնում ես, որ այն վառվեց, լուսամուտը լուսավորվեց՝ ուրեմն, ամենայն հավանականությամբ, ներսը մարդ կա: Գուցե, իհարկե, դրսից, հեռակառավարման վահանակով է մարդն այն վառել, այժմ արդեն դա հնարավոր է: Այստեղ պատճառա-հետևանքային կապ չկա լույսը վառվելու և ներսը մարդ լինելու միջև, նույնիսկ ընդհակառակը. քանի որ ներսում մարդ կա՝ լույսը վառվեց. սա ավելի տրամաբանական կապ է: Սակայն եթե լույսը վառվեց՝ ուրեմն շատ հավանական է, որ մարդ՝ կա: Հետևությունը հետևանք չէ:

Սակայն կան դեպքեր, երբ իրական եթե-ապա-ն և պատճառա-հետևանքային կապը գրեթե նույնական են: Օրինակ, եթե ես ունեմ երկու ձեռք (և նորմալ քաշի ու հասակի մարդ եմ), ապա ես կարող եմ գետնից բարձրացնել երկու գունե 15 կիլոգրամանոց ճամպրուկ: Քանի որ ես ունեմ երկու ձեռք, ուրեմն ես կարող եմ այդ ճամպրուկները բարձրացնել: Երկու ձեռք ունենալու պատճառով (մնացած հանգամանքները ստանդարտ լինելու դեպքում) ես կարող եմ ստանալ երկու ճամպրուկ բարձրացնելու հետևանք:

Սակայն այսպիսի դեպքերը շատ չեն և ընկղմված են խորացած վերլուծության կարիքի մեջ: Այսպիսով, եթե-ապա-ն բացարձակապես պարտադիր չէ, որ լինի պատճառա-հետևանքային կապ: Ավելին. մենք հատուկ ուշադրություն ենք դարձրել այլ անգամներ⁶, որ սովորաբար ոչ մի հետևանք մեկ պատճառ չունի: Իհարկե, երբ ես սեղմում եմ կոճակը, և եթե էլեկտրականությունը հոսում է, ապա լարին ճիշտ ամրացված լամպը հավանական է, որ վառվի: Եթե էլեկտրականություն չլինի, լամպը չի վառվի: Էլեկտրականությունը համարվում է լամպի վառման պատճառ: Սակայն մի շարք այլ պատճառներ էլ են պետք. չկտրված լարեր, կոճակ, այն սեղմող, չփչացած լամպ, ճիշտ ընտրված լամպ, էլեկտրական հոսքի, դրա աղբյուրի առկայություն և այլն: Եվ այստեղ սովորաբար խնդիր է, թե ինչպե՛ս առանձնացնել «գլխավոր» պատճառը: Ոմանք փորձում են դա անել, սակայն դա սովորաբար պայմանականություն է, ինչպես ցույց է տրվել ԽՍՀՄ փլուզումը քննարկելիս՝ կոնտեքստի ընդլայնման մասին խոսելիս: Եթե-ապա-ների դեպքում նույնպես սովորաբար մեկ եթե և մեկ ապա ներկա չէ: Սակայն եթե-ների գումարային ներկայությունն ավելի հեշտ է համրելն ու օգտագործելը (կամ՝ պատկերացնելը, որ դրանք կան, թեկուզ չգիտակցված), քանի որ հատուկ ճիգ և վերլուծություն չի պահանջում, ինչպիսին պահանջվում է պատճառա-հետևանքային կապերը հստակեցնելու և հասկանալու համար (և ապացուցելու, որ դրանք

⁶ Տե՛ս «Կոնտեքստի ընդլայնում» դասախոսությունը և տեքստային տարբերակը այստեղ. <https://epfarmeria.am/hy/video/context-expansion>

հենց դա են): Միաժամանակ, ապա-ներից որոշները կարելի է նույնպես հեշտությամբ նշել, բայց սովորաբար՝ ոչ բոլորը, քանի որ դրանք, ինչպես և եթե-ները, կարող են լինել բազում: Սովորաբար այս դեպքերում կոնտեքստի ընդլայնման փոխարեն տեղի է ունենում, ընդհակառակը, կոնտեքստի նեղացում. վերցվում են միայն այն եթե-ապա-ները, որոնք անհրաժեշտ են տվյալ կոնտեքստում: Ասենք, եթե կարմիր լույս է, պետք է կանգնել, անկախ նրանից, շտապում ես, թե ոչ: Եթե կարմիր լույս է, ապա ավտոմեքենաները կանգնած են, և եթե մեկը կանգնած չէ՝ արդեն պիտի ուստիկանությունը կամ դատարանը քննարկի, արդյոք նրա շտապելն արդարացված էր այդ իրադրության մեջ, թե ոչ – այսինքն՝ կոնտեքստն ընդլայնի:

Եթե-ապա մոտեցումը թույլ է տալիս կյանքը կարգավորել անկախ պատճառա-հետևանքային կապերից: Իրական եթե-ապա-ները նրանք են, որոնք հստակորեն «աշխատեցին» (մոտ) անցյալում, կամ՝ նրանք, որոնց իրականացման մեծ հավանականություն ենք զգում նաև ապագայում: Իհարկե, կարելի է ասել, որ եթե կա իրական եթե, ապա այն ոչ միայն պայմանավորում է որևէ իրական ապա, այլև պատճառ դառնում, որ այդ ապա-ն լինի, քանի որ այլ դեպքում այդ ապա-ն չէր լինի: Օրինակ, եթե երկրագունդը պտտվում է արևի շուրջ տվյալ ուղեծրով, ապա դա պատճառ է, որ լինեն գարուն, ամառ, աշուն, ձմեռ: Եթե գնացել ես համալսարան սովորելու և սովորել որոշակի տարիներ, ապա հավանական է, որ կստանաս փաստաթուղթ այդ մասին: Եթե չգնայիր՝ չէիր ստանա, գնալդ նաև պատճառ է այն ստանալու, ոչ միայն պայման (կամ պատրվակ): Մակայն այն հանգամանքը, որ եթե-ները նաև հաճախ պատճառ կարող են մեկնաբանվել, պետք չէ չափազանցնել, թեև պետք է հաշվի առնել: Գլխավորը, որ տվյալ եթե-ից հետևի տվյալ ապա-ն, իսկ թե որքանո՞վ է այդ եթե-ն պատճառ այդ ապա-ի՝ այլ հարց է:

Պայմանները, ուրեմն, կարող են լինել մարդաստեղծ և ոչ մարդաստեղծ: Օրինակ, «եթե երկրագունդը պտտվում է արևի շուրջ տվյալ ուղեծրով, ապա կգա գարուն, ամառ, աշուն» և այլն ոչ մարդաստեղծ *պայմանություն* է: Հասկանալի է, որ ոչ մարդաստեղծ *պայմանությունները* պարբերաբար մեկնաբանվում են որպես պատճառա-հետևանքային կապ ավելի հիմնավոր կերպով, քան մարդաստեղծները: Մակայն, ինչպես տեսանք, պարտադիր չէ, որ դրանք այդպես մեկնաբանվեն, որպեսզի օգտագործվեն:

Բնային եթե-ապա-ները է՛լ ավելի կարևոր երևույթներ են այդ տեսակետից: Վերջերս մի գեղեցիկ բնային եթե-ապա հնչեց. «եթե ես ՖԲ-ով չգրեի Այսինչին, որն ինձ չծանոթացներ Այսինչին, որն ինձ չընդուներ փորձնակության, ես չէի ընդունվի այսինչ համալսարանը, չէի ավարտի, եթե չավարտեի՝ չէի ստանա այս աշխատանքը»: Պայմանական կապն այստեղ հստակ է, պատճառա-հետևանքայինը՝ ոչ այնքան, քանի որ պարտադիր չէ, որ հենց այդ համալսարանն ավարտելու շնորհիվ (պատճառով) մարդը ստանար տվյալ աշխատանքը, և այլն:

Անիրական եթե-ապա-ները, ուրեմն, կարող են լինել իրականացվելի և ոչ իրականացվելի: Օրինակ, կարող է լինել անիրական եթե-ապա. «եթե ես այս աղջկան ծաղիկ նվիրեմ՝ ապա նա

կծպտա»։ Դա ստուգելի էթե-ապա է։ Սակայն կարող է լինել նաև անիրականանալի և անստուգելի էթե-ապա. օրինակ, «էթե Անդրանիկի կողքը տասը հատ քեզ պես տղա լիներ, Կարսը հիմա մերն էր» (Հրանտ Մաթևոսյանի «Տերը» վիպակից ցիտատ,՝ ոչ բառացի մեջբերում)։ Կամ. «էթե ես թուրքական դրոշն այրեմ, ապա (երևի, ատելությունս ցույց տալու շնորհիվ) հայերի հայրենասիրությունը, միասնականությունը կամ ուժը կավելանա»։ Իհարկե, վերջին դեպքում որևէ այլ էթե-ապա է գործում, ասենք՝ «էթե ես թուրքական դրոշ եմ այրում՝ հաճույք եմ ստանում», կամ «էթե ես թուրքական դրոշ եմ այրում՝ դուր եմ գալիս իմ վերադասին, շրջապատին» և այլն։ Իրական էթե-ապա-ի հենց այդ (հոետորական) փոխատեղումն անիրականով՝ իրական էթե-ապա-ի փոխարեն անիրականը ներկայացնելն է, որ պահանջում է քննադատական մտածողություն, թացը չորից տարբերելու համար։ Այս օրինակներն արժեքային են հնչում, սակայն դրանք կարող են փոխարինվել այլ, ավելի չեզոք օրինակներով։ Ասենք. «էթե ես լավ համալսարան ավարտեմ արտասահմանում, ապա երբեք գործագուրկ չեմ լինի» էթե-ապա-ն թերի է. նախ, կարող է լինես, հետո՝ կարող է և չավարտելիք և չլինելիք։ Սակայն էթե այն փոխարինվի այլ էթե-ապա-ով. «էթե լավ արտասահմանյան համալսարան ավարտեմ, ավելի մեծ շանսեր կունենամ, որ լավ վճարվող և հետաքրքիր աշխատանք ձեռք բերեմ», սա, իհարկե, շատ ավելի ռեալիստական էթե-ապա է։

«Եթե ես պատվաստվեմ, ապա ոչինչ չի փոխվի – պատվաստվածն էլ կարող է հիվանդանալ և նույնիսկ մահանալ, ինչպես նաև՝ վարակել այլոց»։ Այս էթե-ապա-ն պիտի փոխարինվի մեկ այլ, ճշգրիտ էթե-ապա-ով. «էթե ես պատվաստվեմ, ապա ավելի ապահով կլինեմ, որ էթե հիվանդացա, չեմ մահանա, և ավելի քիչ հավանական է, որ վարակեմ և սպանեմ ուրիշների։ Նաև՝ որքան ավելի շատ պատվաստված մարդ լինի, այնքան վարակը ի վերջո կքչանա և նրա մահացիությունը կքչանա»։ Այստեղ վերջին նախադասությունը պատճառա-հետևանքային կապ է առաջադրում, ինչը գիտության ասպարեզն է, սակայն այդ պատճառին համապատասխանելու համար առաջին նախադասության էթե-ապա-ն նույնպես օգտավետ է։

Անհաջողությունների մի խոշոր մասը կարելի է բացատրել սխալ, անիրականալի էթե-ապա-ների վրա հիմնվելու հանգամանքով։ «Եթե ասում են, որ մեր բանակն ուժեղ է, ապա այդպես էլ կա» - սխալ էթե-ապա է։ «Եթե բանակում անօրինություններ են, ապա, միևնույն է, մեր բանակն ուժեղ է» - սխալ էթե-ապա է։ «Եթե նա ղեկավար է, ապա գիտի, ինչ է անում» - սխալ էթե-ապա է։ «Եթե ես ղեկավար եմ, ապա գիտեմ, ինչ եմ անում» - սխալ էթե-ապա է։ «Եթե դիպլոմ ստացա, ապա կյանքս լավ կդասավորվի» - սխալ էթե-ապա է։ Եվ այլն։

Սխալ էթե-ապա-ները ճիշտ էթե-ապա-ներով փոխարինելը հենց կրթացնելն է և կրթացվելը, հենց քննադատական մտածողությունը, հենց գիտությունը։

Ի մի բերելով, կարելի է ասել, որ իրական կամ ճիշտ ծրագրավորված, ճիշտ նախագծված էթե-ապա-ները, ներառյալ՝ բնայինները, օգնում են ավելի հեշտ կողմնորոշվել կյանքում, քան պատճառա-հետևանքային կապերի փնտրտուքը, որն ավելի բարդ է, երկար և գուցե ավելի

անորսալի, քանի որ ապա-ն նաև նշան է, որ տվյալ եթե-ն հանգեցրեց իրեն, իսկ պատճառա-
հետևանքային կապերի դեպքում պարտադիր չէ, որ լինի այդպիսի հստակ նշան:

Զարգացումը, նորարարությունը փորձեր են՝ օգտագործելու իրական եթե-ապա-ներ,
զարգացնելու դրանք, գտնելու բնայինները, հենվելու դրանց և այլն, եթե դրանք չարդարացան՝
փոխելու, նոր եթե-ապա-ներ փորձարկելու:

Գևորգ Տեր-Գաբրիելյան